

25.048

Կ Լ Ի Գ Ա Մ Ա Բ

ԿԱՌՈՒՑՈՂ ԲԱՆՎՈՐԸ ԻՆՉՊԵՍ  
ԿԱՐՈՂ Ե ԲԱՐՁՐԱՑՆԵԼ ԻՐ  
ՎՈՐԱՎԱՎՈՐՈՒՄԸ

(Զբաղւոյնի բանփոխանի հետ)

ՀՐԱՑՆ.ԲԱՆՎՈՒԹՅՈՒՆ

ԿԱՌՈՒՑՈՂ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ԱՐԶՄՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՅԵՐԵՎԱՆ

ԿԵՆՏՐԱԼԻՑԻՑՈՒՄԸ

1920



21 MAY 2013

25.048

Համաձայնեցրած և ՀԱՄԿԽ-ի Գ. Բ.-ի հետ

«Կառուցող բանվորն ինչպես կարող և բարձրացնել իր վորակավորումը» թեմայով խմբակը կազմակերպվում է այն նպատակով, վուպեսզի կառուցողներին, և առաջին հերթին սեպտեմային աշխատանքում զբաղվածներին, պարզ հասկացողութուն տրվի՝

1. Ինչո՞ւ կառուցող բանվորի համար անհրաժեշտ է բարձրացնել իր վորակավորումը, 2. Ինչո՞ւմն է կայանում վորակավորման բարձացումը և 3. Ի՞նչ ֆանապարհներով կարող է կառուցող բանվորը գործնականում բարձրացնել իր վորակավորումը:

Այդ յերեք թեմաներն ել հենց զըրված են 3 զրույցների հիմքում, վորոնք պետք է ընդգրկեն բոլոր այն հարցերը, վորոնք կապված են կառուցող բանվորի վորակավորման բարձրացման հետ և հետաքրքրում են նրան:

ՀԱՅՊՈԼԻԳՐԱՖԻ Ի ՏՊԱՐԱՆ  
ՊԱՏՎԵՐ № 797  
ԳՐԱՌԵՊԳԼԽՎԱՐ 1474 Բ.  
ՏԻՐԱԺ 1000

Զրույց տնային

ԻՆՉՈՒ ԲԱՆՎՈՐ-ԿՍՌՈՒՅՈՂԻՆ ԱՆՀՐԱ-  
ԺԵՇՏ Ե ԲԱՐՉՐԱՅՆԵԼ ԻՐ ՎՈՐԱԿԱՎՈ-  
ՐՈՒՄԸ

Զրույցի նպատակը

Ամեն մի բանվոր, նույնիսկ ամենա-  
անգիտակից բանվորը, բնականորեն,  
ձգտում է բարելավել իր տնտեսական  
գրությունը և ամապնդել իր դիրքն ար-  
տադրության մեջ: Վորչափ լավ է կատա-  
րում բանվորն իր աշխատանքը, այնչափ  
չուտնա կարող է իր աշխատավարձը բար-  
ձրացնել, այնչափ ամուր է նրա կապն  
արտադրության հետ, այնչափ ավելի յե-  
նա գնհատվում արտադրության մեջ: Այդ  
պատճառով յուաքանչյուր անհատ բան-  
վորի վորակավորման բարձրացումը նրա  
անձնական նյութական գրության բար-  
վորման ուղղակի ճանապարհն է: Սա-  
կայն, բանվորի վորակավորման բար-  
ձրացումը վոչ մի դեպքում չի կարող հա-  
մարվել և չպետք է համարվի վորպես  
սոսկ միջոց բանվորի աշխատավարձի

բարձրացման: Վորակավորման բարձրա-  
ցումը ԽՍՀՄ-ի մեջ անհրաժեշտ է բան-  
վորին, վորպես սոցիալիստական շինա-  
րարությանը մասնակցողի: Վորչափ  
բարձր լինի բանվորական մասսայի ար-  
տադրողական գրագիտությունն, այն-  
չափ շուտ մենք կբարձրացնենք աշխա-  
տանքի արտադրողականությունը, այն-  
չափ շուտ կանցկացնենք արտադրության  
բացիոնալացումը և կիջեցնենք շինա-  
րարության արժեքը, այնչափ շուտ կբար-  
ձրացնենք բանվոր դոտակարգի նյութա-  
կան մակադակը:

Ահա թե ինչու այս գրույցի հիմնա-  
կան նպատակն է ցույց տալ բանվոր-կա-  
ռուցողին, վոր նրա վորակավորման և  
արտադրողական-տեխնիկական գրագի-  
տության բարձրացումը անհրաժեշտ է վոչ  
միայն ամեն մի առանձին բանվորի շահի  
համար, այլև անհրաժեշտ է ամբողջ բան-  
վոր դասակարգի շահերի տեսակետից:  
Առանց բանվորական մասսաների վորա-  
կավորումը բարձրացնելու, մենք չենք  
կարող հաղթահարել սոցիալիստական շի-  
նարարության հսկայական դժվարություն  
ները: Առանց բարձրացնելու տեխնիկա-  
կան գրագիտությունը, մենք վոչ միայն  
չենք կարող առաջ անցնել արևմտա-յեվրո-

պահան և ամերիկական տեխնիկայից, այլ և զժվար կլինի նրան հասնելը: Առաջին զրուցյով անհրաժեշտ է համոզել բանվորին այդ բանում:

### ԶՐՈՒՅՅԻ ԾՐԱԳԻՐԸ

1. Ի՞նչ նշանակութիւն ունի վորակավորման բարձրացումը յուրաքանչյուր անհատ բանվորի համար:

2. Ի՞նչ նշանակութիւն ունի կառուցողի վորակավորման բարձրացումը ԽՍՀՄ-ն ինդուստրացման համար:

3. Ի՞նչպէս և անգրագատնում բանվորի վորակավորումը արտադրութեան նորմային թացքի վրա:

4. Բանվորների վո՞ր խմբակները պիտի զբաղվեն վորակավորման բարձրացումով, առաջին հերթին:

5. Ի՞նչն է խանգարում կառուցող բանվորին բարձրացնելու իր վորակավորումը:

6. Ինչպէ՞ս պետք է բանվորը դառնա արտադրութեան «խիական տերը»:

### ԶՐՈՒՅՅԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒ-

#### ԹՅՈՒՆԸ

1. Ի՞նչ նշանակութիւն ունի վորակավորման բարձրացումը յուրաքանչյուր անհատ բանվորի համար:

Յաճ վորակավորումը ծանր քարի պէս կախված է բանվորի պարանոցից: Աշխատանքն ամեն որ հիշեցնում է նրան, թե վորչափ անբավարար է նրա պատրաստականութիւնը: Բոլորին հայտնի յե, ինչպէս ընդհանրապէս զժվար է վոչ մի վորակավորում ունեցող սեպորժ բանվորի համար մշտական աշխատանք գրտնելը: Քիչ պատրաստականութիւն ունեցող բանվորը ընդունվելով կառուցողական աշխատանքի, առաջին իսկ քայլերից հանդիւլում է մի շարք զժվարութիւններին: Արտադրողական պայմանների հետ բավարար չափով ծանոթ չլինելու, սարքավորման հետ վարվելու ձեւը չիմանալու, աշխատանքի վտանգավոր կողմերի հետ անծանոթ լինելու հետեանքով բանվորը յենթարկվում է զժբաղղ պատասխարներին, հաշմանդամանում է: Անբավարար պատրաստականութեան տեր բանվորն ավելի յերկար ժամանակ է մնում աշխատանքի բորսայում, քան բավարար վորակավորում ունեցողը:

Վորակավորման բարձրացումը հնարավորութիւն է տալիս բանվորին լավ արագ և ճիշտ աշխատելու, մեծացնելու արտադրողականութիւնը, հետեապէս և բարձրացնելու իր աշխատավարձը: Վո-

բակաւորման բարձրացումը բանվորի առաջ լայն ճանապարհ է բաց անում առաջ քաշվելու ամէլի բարձր տնտեսական պաշտոնների:

Գործազուրկ բանվորի համար վորակաւորման բարձրացումը կամ վորակաւորվելը հաճախ հանդիսանում է միակ ուղիղ միջոցը՝ աշխատանք ստանալու: Բանվոր յերիտասարդության համար վորակաւորումը կենսական խնդիր է, վորից կախված է իր համար ճանապարհ հարթելը ղեպի ոգտաւետ աշխատանք, գործոն մասնակցություն ունենալու ԽՍՀՄ-ն շինարարության մեջ: Բանվորուհու համար վորակաւորում ձեռք բերելն ուղիղ ճանապարհ է տղամարդու հետ իրապես հավասարվելու, արտադրության մեջ կայուն դիրք գրավելու: Բանվորական բնտանիքը կենսականորեն շահագրգռված է, վորպեսզի հասունացող յերիտասարդությունը հասակավորներից յետ չմնա մասնագիտությունն ուսումնասիրելու մեջ, վորպեսզի նոր սերունդն ամէլի լավ պատրաստված լինի վորակյալ աշխատանքի, քան հասակավոր սերունդը: Վորակաւորում ստանալու աշխատանքը լավագույն միջոցներից մեկն է բանվորական յերիտասարդության միջավայրի քայ-

քայման, օրիկայության գարգացման ղեմն առնելու:

Վորակաւորման բարձրացման խրդրում յուրուխնչյուր բանվոր շահագրգռված է վոչ միայն առանձնապես, այլև վորպես բանվոր դասակարգի միասնական բնտանիքի անդամի:

2. Ի՞նչ նշանակություն ունի կառուցողի վորակաւորման բարձրացումը ԽՍՀՄ-ն ինդուստրացման համար:

Մեր յերկիրը կանգնել է սոցիալիստական շինարարության ուղղի վրա: ԽՍՀՄ-ն արդյունագործությունն անցնում է ամէլի բարձր տեխնիկական մակարդակի: Ծավալվել է հսկայական շինարարություն Փարբիկաների և գործարանների, յերկաթուղիների, բանվորական բնակարանների, դպրոցների, ակումբների և այլն: 1927 թվին Սորհրդային կառավարությունը նոր հիմնական շինարարության համար մեկ միլիարդ ուրբլուց ամէլի յե բաց թողել: Մենք ձեռնամուխ ենք յեղել կառուցելու տեխնիկայի այնպիսի հսկաներ, ինչպիսիք են Դնպրոստորոյը, Թուրքեստան-Սիբիր յերկաթուղաղիծը, բազմաթիվ ելեքտրական կայաններ, Փարբիկաներ և գործարան-

ներ: Շինարարութեան աշտպիսի լայն  
թափը պահանջում է կառուցող բանվոր-  
ների նշանակալից կազմեր, առանց վորոնց  
ինդուստրացումը չի իրականանա: Սեր  
վողջ յերկիրը, վողջ բանվոր դասակարգը  
չահագրգռված է, վորպեսզի մենք կառու-  
ցենք լավ, կառուցենք հասկանալով, ա-  
ժան և դիմացկուն: Բավական չէ մեծաց-  
նել կառուցողների կազմերը, — հարկավոր  
է նաև բանվոր-կառուցողի վորակավո-  
րումը ևս դարձնել միանգամայն բավա-  
րար, վորովհետև կառուցումների, շեն-  
քերի վորակի վրա ազդող պատճառներից  
մեկն էլ հանդիսանում է բանվորի վորա-  
կավոր լինելը: Բանվորի թույլ վորակա-  
վորման շնորհիվ հաճախ կառուցումն  
անպետք է լինում և հարկադրված ենք  
լինում վերակառուցել այն: Կառուցողի  
թույլ վորակավորումը վտանգ և պատ-  
նում շենքերի հատկութեանը, թանկաց-  
նում է կառուցումը և դրանով իսկ ավե-  
րացնում է կառուցվող ձեռնարկութեան  
ապագա արտադրանքի արժեքը: Վորա-  
կավոր կառուցող բանվորների պակասը և  
նրանց ցած վորակավորումը կարող է  
բայթայել սոցիալիստական շինարարու-  
թյունը և կասեցնել բանվորի և դյուրա-  
ցու կենսական մակարդակի բարելա-

վումը: Ավելի քան 1·200·000 կառուցող-  
ների բանակի պատրաստված լինելը, վոր  
զբաղվելու յե գալիք սեզոնում: Շինա-  
րարութեան մեջ, կարևոր նշանակություն  
ունի ԽՍՀՄ-ն ժողովրդական անտեսու-  
թյան համար:

3. Ինչպե՞ս է անդրադառնում բան-  
վորի վորակավորումն արտադրութեան  
նորմալ ընթացքի վրա

Վորպեսզի շինարարութեանն առանց  
ընդմիջումների ընթանա, անհրաժեշտ է,  
վոր արտադրութեան յուրաքանչյուր ո-  
ղակը, յուրաքանչյուր առանձին աշխա-  
տանք ապահովված լինի բավարար թվով  
վորակյալ բանվորներով:

Ժամանակակից արտադրութեանը աչ-  
քի յե ընկնում աշխատանքի խիստ զար-  
գացած բաժանումով: Ամբողջ աշխատան-  
քի, ինչպես և ամեն մի բանվորի աշխա-  
տանքի հաջողութեանը կախված է վողջ  
աշխատանքի համաձայն ընթացից, բո-  
լորի և յուրաքանչյուրի վորակավոր  
լինելուց: Ներկայումս կառուցման ար-  
տադրութեան մեջ անց և կացվում մի  
չարք աշխատանքների մեքենայացում:  
Կառուցողական արտադրութեան բացիո-  
նայացումը պահանջում է կառուցող բան-

վորից ձեռք բերել նոր սովորութիւններ: Բանվորը աշխատում է նոր մեքենաների վրա, նոր, անսովոր պայմաններում: Փորձը ցույց տվեց, վոր աշխատանքների մեքենայացումը չի տալիս աշխատանքի արտադրութեան սպասված բարձրացումը և չի աժանացնում կառուցումը, յեթե բանվոր-կառուցողը նախապատրաստված չէ աշխատանքի նոր ձևերին:

Յերկրի ինդուստրացումը կառուցող բանվորների նշանակալից կազմեր ձգեց դեպի արդյունադործական կենտրոններ: Այդ բանվորների մի մասը, շինարարութեան մեջ տեղի ունեցած յերկարատեղադարի շնորհիվ, վերադարձավ աշխատանքի ընկած վորակավորումով և արտադրողական հնացած սովորութիւներով: Շատ կառուցող բանվորներ, առաջին անգամ առնչվելով արտադրութեան հետ, իրենց մասնագիտութեան աշխատանքի մասին չունեն պարզ պատկերացում:

Սոչոր շինարարութեան աճումը և պայքարը՝ բարձրացնելու խորհրդային շինարարութեան աշխատանքի վորակը՝ բանվորներից սրահանջում են գիտակից մասնակցութեան արտադրութեան բարելավման գործում: Վարչապի բարձր է բանվորի ատադրողական գրադիտութեանն,

այնչափ նա ավելի կարող է անել՝ շինարարութեան կատարելագործման համար, այնչափ արժեքավոր կլինի նրա մասնակցութեանն արտադրական խորհրդակցութեան մեջ: Գիտակից բանվորի առողջ քննադատութեանը, վոր հասկանում է իր արտադրութեանը, արտադրողականապես գրագետ է,— շինարարութեան նորմալ ընթացքի կարևորագույն պայմաններից մեկն է:

4. Բանվորների վոր խմբակները պիտի գրադվեն վորակավորման բարձրացումով առաջին հերթին:

Բանվոր դասակարգն ամբողջութեամբ առած, շահագրգռված է, վորպեսզի յուրաքանչյուր բանվոր, ըստ հրահարավորի, բարձրացնի իր վորակավորումը: Սակայն, կառուցողական արտադրութեան մեջ, ինչպես և աշխատանքի այլ ճյուղերում, կան այնպիսի մասնագիտութեան բանվորներ, վորոնց վորակավորումից կախված է վոր միայն այդ բանվորների աշխատավարձի բարձրացումը, այլ անմիջականորեն ամբողջ կառուցման անվնասութեանը, ընկերների կյանքը և առողջութեանը: Ամեն մի բանվոր, վոր արտադրութեան մեջ կա-

տարում \*ե պատասխանատու աշխատանք, վորից կախված է արտադրութեան բանահաջողութեանը և ընկերներէ կյանքը, պետք է ամեն կերպ ձգտի իր աշխատանքի ընազավառում ձեռք բերելու կատարյալ տեխնիկական գրագիտութեան: Կարելի՞ յի արդյոք, որինակ, կամուրջների կառուցման, ելեքարամոնտաժային, լեսոններում և այլն աշխատանքի թույլ տալ այնպիսի բանվորների, վորոնք իրենց գործը լավ չգիտեն և չեն հասկանում իրենց ունեցած պատասխանատուութեանը: Հասկանալի յե, վոր յուրաքանչյուր բանվոր-կառուցող այս կամ այն չափով, համաձայն արտադրութեան մեջ ունեցած իր գիբքի, պատասխանատու յե վոր միայն իր անձնական աշխատանքի համար, այլ և պատասխանատու յե ամբողջ շինարարութեան և ընկերների կյանքի ապահովութեան:

Իժբախտարար, կորհրդային իշխանութեանը դեռ ևս միջոցներ չունի, վոր պետքի կարողանա բավարարել բոլոր բանվորների ցանկութեանը՝ բարձրացնելու իրենց վորակավորումը: Ուստի հարկադրված ենք առաջին հերթին բարձրացնելու այն բանվորների վորակավորումը, վորոնց կարիքն արդյունաբերութեանն

ամենից շատ է զգում: Այդպիսով, առանձին բանվորների շահերը յենթարկվում են ամբողջ արտադրութեան շահերին: Յեթի շինարարութեան համար, որինակ, պահանջվում են պահպանակագործներ (արմատուրչչիկներ), հասկանալի յե տպագրութեան անպատահահարմար է քարտաշներ պատրաստելը: Վորակավորման բարձրացման և շինարարութեան համար բանվորներ պատրաստելու աշխատանքը պետք է յենթարկվի ծրագրային տնտեսութեան պահանջներին:

Մեծ նշանակութեան ունի վորակավորված կառուցողներ պատրաստելը յերիտասարդութեանից, վորն ավելի ընդունակ է ուսումը յուրացնելու: Հասկանալի վոր վորակավոր բանվորական ուժի բնական կարգով առաջացած պակասը պետք է լրացվի նախ և առաջ յերիտասարդութեան շարքերից:

5. Ի՞նչն է յսանգարում կառուցող բանվորին բարձրացնելու իր վորակավորումը:

Կառուցող բանվորների հակայական մասը գալիս է գյուղից, կառուցողական աշխատանքի յե գալիս անգրագետ: Անգրագետ բանվորը արտադրութեան

մեջ կարող է առաջ գնալ միայն բացառիկ դեպքերում և մեծ դժվարութեամբ: Անգրագետ բանվորը վոչ միայն հնարավորութեան չունի լրագիր, գիրք կարգալու, վորոնք կարող ելին նրան ոժանդակել իր վորակավորումը բարձրացնելու, նա չի կարող նույնիսկ ծանոթանալ ներքին կարգապահութեան կանոններին, անվրտանգութեան մասին յեղած հրահանգներին: Նա արտագրութեան մեջ նմանվում է կույրի: Առանց առաջնորդի՝ հանձնադրագետ բանվորի՝ անգրագետ բանվորը յենթակա յե մշտական վտանգի և դատապարտված է ամենաձանր աշխատանք կատարելու: Ուստի անգրագիտութեան վերացումը կարևոր պայման է հետագայում վորակավորումը բարձրացնելու համար:

Պետութեան միջոցների պահասութեանը, հաճախ նաև կենցաղային պայմանները յերբեմն արգելք են հանդիսանում բանվորների վորակավորումը բարձրացնելու գործը գնել համապատասխան բարձրութեան վրա:


6. Ինչպես պետք է բանվորը պառնա արտադրութեան իսկական տերը:

Հոկտեմբերյան Հեղափոխութեանը

ԽՍՀՄ բանվոր դասակարգին դարձրեց յերկրի, նրա ժողովրդական տնտեսութեան, Փաբրիկաների և գործարանների տերը: Վորպեսզի յերկիրը կանգնի ամբարձր տնտեսական մակարդակի վաշխատավորութեանը կարողանա ապրել, ամեն մի գիտակից բանվոր պետք է ձգտի հասկացող, գրագետ և ճարտար տեր դառալ: Ինչ աշխատանքի յել վոր կանդնած լինի բանվորը խորհրդային պետութեան մեջ, ինչ «կոպիտ» աշխատանք էլ վոր կատարելու լինի, նա պետք է ձգտի կատարել լավ, այնպես, ինչպես «գործատեր»: Բարձրացնելով իր վորակավորումը, բանվորը դառնում է սոցիալիստական տնտեսութեան ճարտար կառուցող: Վոչ մի բանվոր իր աշխատանքի մեջ չպետք է մոռանա այն մասին, վոր արդյունագործութեան մեջ յուրաքանչյուր բարելավում, յուրաքանչյուր գյուտարարութեան, նույնիսկ ամենաչնչին տեխնիկական կատարելագործութեան թանգարժեք ոժանդակութեան է սոցիալիզմի կառուցման գործին:

Արտագրական խորհրդակցութեաններում հրապարակ են հանվում արտագրութեան թույլ կողմերը, այստեղ էլ հենց մշակվում են թերութեանները վե-

124  
1005  
30679



րացնելու գործնական առաջարկները: Բանվորը, մասնակցելով արտադրական խորհրդակցութեան, հնարավորութեան ունի հրապարակ բերելու իր պատրաստականութեան, արտադրողական գիտութեան պակասութեանները և միաժամանակ ընկերներին փորձերի հիման վրա հարտացնելու իր փորձը:

Արտադրական խորհրդակցութեանը վորակավորումը բարձրացնելու թանգարժեք միջոցներից մեկն է—միևնույն ժամանակ, բանվոր-կառուցողը գործոն մասնակցութեան ունենալով արտադրական խորհրդակցութեան աշխատանքին, սովորում է արտադրութեանը կառավարելը—գտնում է արտադրութեան խսկական տերը:

### ՄԵԹՈՂԱԿԱՆ ՅՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ

Ձրույցի ամեն մի առանձին մաս պետք է լուսարանվի ավյալ արտադրութեան, բանվորների ավյալ խմբակի պրակտիկայի որինակներով: Անհրաժեշտ է հատուկ ուշադրութեան դարձնել դրժբախտ պատահարների, կառուցման սրահատութեանների վրա, փորոնք առաջացել են ավյալ կառուցման մեջ բանվորների վտա փորակավորման շնորհիվ:

Հասկանալի չէ, բանվորների մեջ կարող են ծագել վորակավորման հետ կապված շատ հարցեր ևս: Խմբակի ղեկավարն աչք մասին մանրամասն նյութ կգտնի Լ. Բեյքերգի «Ինչպես է արհմիութեանը սովորում բանվորին բարձրացնելու իր վորակավորումը» բրոշյուրում: Բանվորների համար կարելի չէ հանձնարարել Լ. Բեյքերգի «Բանվորն ինչպես կարող է բարձրացնել իր վորակավորումը» բրոշյուրը:



## Զրույց յերկրորդ

### ԻՆՉՈՒՄՆ Ե ԿԱՅԱՆՈՒՄ ՎՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԲԱՐՁՐՍՅՈՒՄԸ

## Զրույցի նպատակը

Հարկավոր է յուրաքանչյուր բանվորի ցույց տալ, թե նբանից ինչ պահանջներ են արվում, վորպեսզի նա իր մասնագիտութեան մեջ բավարար վորակավոր համարվի: Անհրաժեշտ է, վորպեսզի բանվորը հասկանա թեորիայի և պրակտիկայի, հմտութեան, սովորութեանների և գիտութեանների մեջ յեղած կապը: Զրույցի նպատակի մեջ մտնում է բանվորներին բացատրել, թե ինչ կարևոր նշանակութեամբ ունեն վորակավորման բարձրացման համար բանվորական ուղիղ պրոյոմները և այն ոժանդակութեանը, վոր տալիս է բանվորին գործնական գիտութեանների հետ ծանոթ լինելը և նբանց կատարելագործութեաններից սգտվելու կարողութեանը: Համաձայն խմբակի կազմի, անհրաժեշտ է ճշգրիտ սահմանել և տալ կառուցողական արտադրութեան

առանձին մասնագիտութեանների բանվորների արտադրողական բնութագրումը (քարհատներ, հյուաններ, վառարանագործներ, խճոնագործներ և այլն):

## Զրույցի ծրագիրը

1. Վո՞ր բանվորին մենք կարող ենք համարել վորակավոր:
2. Ինչի՞ց սկսել վորակավորումը բարձրացնելու աշխատանքը:
3. Ինչպե՞ս տիրապետել աշխատանքի ուղիղ ձևերին:
4. Ի՞նչ նշանակութեամբ ունի թեորիատիկ գիտութեանը:
5. Ի՞նչ է պահանջվում կառուցողից, վորպեսզի նա դառնա վորակավոր քարհատ, հյուան, վառարանագործ, խճոնագործ, և այլն:

### ՉՐՈՒՅՑԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒ- ԹՅՈՒՆԸ

1. Վո՞ր բանվորին մենք կարող ենք համարել վորակավոր:
- Վորակավոր բանվորից պահանջվում է արագաշարժութեամբ, ճշտութեամբ, աշխատանքի ունակութեամբ, արտադրողական կարգապահութեամբ և դրանց գույրութեամբ, հատուկ արտադրողական-տեխնի-

կական գիտություն, արտադրողական ըմբռնում և կազմակերպված ունակություններ: Վորակավոր բանվորից պահանջվում է վորոշ խնքնուրույնություն իր կատարած աշխատանքի շրջանակում, վստահություն և կարողություն, հազթահարելու աշխատանքի մեջ առաջացող գծավարությունները: Վորակավոր բանվորը պետք է ունենա վորոշ բազմակողմանի հմտություն, ունենա բազմակողմանի արտադրողական փորձ:

Վորակավոր բանվորներին շինարարական գործի զանազան մասնագիտությունների կողմից առաջադրած պահանջները, հասկանալի չե, խիստ հանազան են: Այդ պահանջները մասամբ մշակված են տարիֆային տեղեկատուներում և վորույնում են հմտության և գիտությունների այն շրջանը, վորպիսիք պետք է ունենա բանվորը, այս կամ այն կարգի համարվելու ցանկության դեպքում: Բանվորի վորակավորումը վորոշելու ամենատարածված միջոց համարվում է նրան վորձելը:

Բանվորը մեր յերկրում պետք է այս կամ այն չափով կարող լինի արտադրությունը վերափոխել և կատարելադորձել: Գիտակից խորհրդային բանվորի ստեղծագործական-արտադրողական ունակու-

թյունը հանդիսանում է մեր արտադրության խոշոր շարժիչ ուժը:

Ուստի ԽՍՀՄ բանվորի արտադրողական վարքը պետք է արմատապես տարբերվի կապիտալիստի համար աշխատող բանվորից: Վորակավոր խորհրդային կառուցող-բանվորից պահանջվում է բարձր արտադրողական կարգապահություն և «տիրոջ» խնայողական վերաբերմունք դեպի նյութը, գործիքները, արտադրությունը:

2. Ինչի՞ց սկսել վորակավորումը բարձրացնելու աշխատանքը:

Վորակավորումը բարձրացնելու համար անհրաժեշտ է, նախ և առաջ, ծանոթանալ այն արտադրությանը, վորի մեջ աշխատում ես: Այն բանվորը վորը կատարում է իր աշխատանքը, առանց հետաքրքրվելու, թե ի՞նչ է կատարվում իր շրջապատում, չի կարող լավ վորակավորված բանվոր դառնալ:

Ժամանակակից արտադրական պրոցեսը առանձին ողակներից կազմված մի բարդ շղթա չե հիշեցնում: Արտադրության մեջ սոսկ մի պտուտակ չլինելու համար, բանվորը պետք է ծանոթանա վոր միայն իր աշխատանքի հետ, այլ և ար-

տաղբաւիան այն ողակներէ հետ, վորոնք նախորդում են և հաջորդում են իր աշխատանքին: Միայն այն բանվորն է իր վորակավորումը բարձրացնելու ուղիղ ճանապարհի վրա կանգնում, վոր աշխատում է պարզել իրեն շրջապատող յերեւելիքների պատճառը, փնտրում է իրեն անհասանելի պրոցեսներէ բացատրությունները:

Համաձայն բանվորների վորակավորման տարբեր աստիճաններում կատարված աշխատանքի, վորակավորման բարձրացման ճանապարհները ևս տարբեր են: Այն մասնագիտություններում, վորոնց մեջ պահանջվում է գլխավորապես ձեռքերի ունակություն, հմտություն արագ և ճիշտ կատարելու վորոշ շարժումներ, վորակավորման բարձրացման հիմքը կազմում է այդ գործնական ունակությունների, բանվորական պրոմների կատարելագործումը և նրանց պարզ ձև տալը: Այդպես, որինակ, վորմնագիրը կատարելագործելով աղյուս բռնելու և շարելու միջոցները, կարող է բարձրացնել իր արտադրողականությունը մի քանի անգամ, ինչպես ցույց է տալիս Ամերիկայի վորձը կամ Աշխատանքի Գնտրոնական Ինստիտուտի նվաճումները:

Սակայն, մենք ունենք նաև այնպիսի մասնագիտություններ, վորոնց մեջ վորակավորման հիմունքը կազմում է վոր այնքան ձեռքերի հմտությունը, վորքան արտադրության պրոցեսը հասկանալը և վորոշ թեորեաիկ պատրաստությունը: Որինակ կարող են ծառայել աղյուս թըրծող կամ կիր այրող և այլն վառարանների վորակավոր բանվորները: Կառուցողական արտադրության մեջ վորակավոր բանվորների մի քանի կատեգորիաների համար կառուցողական աշխատանքների նորմիրովկան և կազմակերպումը (աշխատաչափի կանոնագիրը) նույնքան կարևոր է, վորչափ «ձեռքերի» ունակությունը և հմտությունը:

Արտադրության մեջ, նախ և առաջ սովորաբար գնահատվում է աշխատել կարողանալը, սպա միայն գիտությունը:

Արտադրողական փորձին, սովորաբար առավելություն է տրվում թեորեաիկ գիտությունից: Բայց արտադրության համար ամենից գնահատելի բանվոր հանդիսանում է նա, ում արտադրողական փորձը կապակցվում և միանում է բեորեաիկ լավ պատրաստության:

3. Ինչպե՞ս տիրապետել աշխատանքի ուղիղ ձևերին:

Կարելի չէ գիտենալ, թե ինչ է կատարվում արտադրութեան մեջ, կարելի չէ նաև լավ գրագետ լինել, բայց լավ վորակավորված բանվոր լինելու համար պետք է տիրապետել աշխատանքի ձևերին:

Կարելի չէ աշխատել սովորել այնպես, ինչպես արվում էր հնումը՝ գիտելով ուրիշ վորակավոր բանվորների աշխատանքը: Դա յերկարատև, անկազմակերպ սովորելու ձև է: Իսկ այժմ՝ վորակավորում ձեռք բերելու և վորակավորումը բարձրացնելու համար գործադրվում է բացիսնալ գիտական մեթոդներ: Ուղիղ աշխատանքի համար բանվորներին հարկավոր է ուղիղ ձևով սովորած աշխատանքի յեղանակ: Աշխատանքի ուղիղ յեղանակը ստեղծվում է աստիճանական մարզանքով, այսինքն՝ վարժութեամբ, աշխատանքային հաստատուն, ամուր հմուտություն մշակելով: Վերջ վորակավորման հասնելու համար մարզանքը, վարժությունը ահագին նշանակություն ունի: Այդ մարզանքն այն ձևով պիտի կատարվի, վորպեսզի բանվորն աստիճանաբար տիրապետի աշխատանքի առանձին յեղանակներին, համաձայն նը-

րանց աստիճանաբար աճող դժվարությունների: Բանվորը հեղհեռե վարժվելով նոր շարժումներին, նոր ձևերին, սկսում է այդ շարժումներն ու ձևերը կատարել առանց մտածելու, ինքնաբերաբար: Վարժությունների և հմուտության հետևանքը լինում է այն, վոր շարժումներն այլևս բանվորից չեն պահանջում հատուկ ուշադրություն, այլ տեղի յեն ունենում հեշտութեամբ:

ՀԱՄԿԽ-ի Աշխատանքի Կենտրոնական Ինստիտուտը ներկայումս բանվորներին կատուցման արհեստներ սովորեցնելու գիտականորեն հիմնավորված նպատակահարմար մեթոդներ է մշակում: Բանվորի աշխատանքի յեղանակ ձեռք բերելու ուղիղ ձևերի մարզանքի մանրակրկիտ մրտածված սխստեմի վրա հիմնված այդ մեթոդները ներկայումս յայն գործադրվում են պրակտիկայում: Այս սեզոնում հազարավոր կատուցողներ արդեն նախապատրաստվում են Աշխատանքի Կենտրոնական Ինստիտուտի մեթոդներով:

4. Ի՞նչ նշանակութեուն ունեն վարակավորման բարձրացման համար թեորետիկ գիտութեունները:

Վորակավորում ձեռք բերելու համար

Թեորեատիկ գիտութիւններ ձեռք բերելը  
չափազանց կարեւոր է: Վորակավոր բան-  
վոր կառուցողը պետք է կարողանա ոգտը-  
վել Աշխատաչափի Կանոնագրքից, տեղե-  
կատուններից և այլն: Առանց մատեմատի-  
կա իմանալու, անկարելի յի հաշիվներ ա-  
նել, վորոնց հետ կառուցողը ստիպված է  
հաճախ գործ ունենալ: Հավասարակշռու-  
թյան, մեխանիկայի, նյութերի դիմա-  
դրության հիմնական որոնքներն իմանալը,  
կառուցողական արտադրության մեջ գոր-  
ծադրվող նյութերի ֆիզիքական և քիմի-  
ական հատկութիւնների հետ ծանոթ լի-  
նելը և այլն, մեծ չափով նպաստում է կա-  
ռուցողին գիտակից վերաբերմունք ունե-  
նալու դեպի իր արտադրողականութիւնը,  
դեպի իր աշխատանքը: Տեխնիկական գի-  
տութիւններ ձեռք բերելու ձգտումը բնդ-  
գրկել է կառուցող բանվորների լայն մաս-  
սաներ: Արհկազմակերպութիւնների նը-  
պատակն է լինելու ոգնել կառուցող բան-  
վորին ձեռք բերելու հատկապէս այն գի-  
տութիւնները, վորոնք առանձնապէս ան-  
հրաժեշտ են կառուցողական արտադրու-  
թյան դանագան արհեստների բանվորնե-  
րին: Թեորեատիկ գիտութիւնները կարող  
են ոգնել բանվորին տիրապետելու նաև  
այսպէս կոչված «արտադրության գաղտ-  
նիքներին»:

5. Ի՞նչ է պահանջվում կառուցողից, դառ-  
նալու վորակավոր վարմնադիր, հյուսն,  
վառարանագործ, խնոնագործ և այլն.

Ներկայումս մշակված են դանագան կա-  
տեգորիաների վորակավոր կառուցող բան-  
վորներ պատրաստելու ծրագրեր: Ամեն մի  
արհեստ աչքի յի ընկնում գործնական ար-  
տադրական հմտության, գիտութիւննե-  
րի և կազմակերպված ունակության ու-  
րույն շրջանով: Մանրամասն տեղեկու-  
թիւններ այդ մասին կարելի յի գտնել  
ինչպէս տարիֆային տեղեկատուներում,  
նույնպէս և պրոֆտեխնիկական կուրսերի,  
կառուցող աշակերտների, բրիգադային և  
անհատական աշակերտության դպրոցնե-  
րի, ԱԿԻ—կուրսերի ծրագրերում: Անհրա-  
ժեշտ է նկատել, վոր ամեն բանվոր չի հա-  
մապատասխանում կառուցողական ամեն  
արհեստի: Չի կարելի, որինակ, լավ տա-  
նիքագործ պատրաստել այն մարդուն, վո-  
րը գլխապտույտ ունի: Գժբայտ դեպքե-  
րը, հիվանդութիւնները և անհաջողու-  
թիւնները հաճախ բացատրվում են նը-  
նով, վոր ավյալ աշխատանքի մեջ այնպի-  
սի մարդ է գտնվում, վորն, ինչպէս ա-  
սում են, «չի համապատասխանում», կե-  
այդ աշխատանքի բնդունակութիւնները  
չունի:

Աւստի Աշխատանքի, Լուսավորութեան և Առողջապահութեան ժողովրդական Կոմիտեաների մարմինները մի շարք տեղերում ստեղծել են հատուկ հանձնաժողովներ, վորոնք ոժանդակում են բանվոր յերիտասարգութեանը արհեստընտրելիս չսխալվել:

### ՄԵԹՈՂԱԿԱՆ ՅՈՒՅՄՈՒՆՔՆԵՐ

Այս գրույցի համար ղեկավարը պետք է զինված լինի ծրագրային նյութերով, վորը լույս է բնծայված Կառուցողների ԿԿ-ի, Արհգլխուսի և ԱԿԻ-ի կողմից: Այս գրույցը հանձնարարվում է տանել, բստ հնարավորի, դիտողութեամբ, արտադրութեան իսկ մեջ, կամ ԱԿԻ-ի կուրսերում, կամ թե դպրոց արհեստանոցներում և այլն: Ղեկավարը հատուկ ուշադրութեան պիտի դարձնի ուղիղ արտադրողական յեղանակներ ցույց տալուն: Վորմիադիրներին, որինակ, պետք է ցույց տալ աղյուսը բռնելու և դարսելու ամենից խնայողական ձևը: Այս գրույցով ղեկավարը պետք է հասնի այն բանին, վոր պեսզի բանվորները հավատան վորակավորումը բարձրացնելու հնարավորութեան, վորպեսզի բանվորները խելամուտ լինեն «վորակավորման» ելութեանը, բանվորական ուղիղ յեղանակին:

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Բացի առաջին գրույցի համար մատնանշած բրոշյուրից, ղեկավարի համար կարելի յեմատնանշել ՁՆ. Գրիշինի—«Կառուցող աշակերտութեան» բրոշյուրը, Դասուսի «Ինչպես պետք է աշխատել» գիրքը:

Զույգ յերրոզ

ԻՆՉ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ ԿԱՐՈՂ Ե ԿԱՌՈՒՅՈՂ,  
ԲԱՆՎՈՐԸ ԲԱՐՁՐԱՅՆԵԼ ԻՐ  
ՎՈՐԱԿԱՎՈՐՈՒՄԸ

Այս գրույցով պետք է կառուցող բան-  
վորին գործնական ցուցմունքներ տրվի  
արհեստակցական-տեխնիկական դպրոցնե-  
րի մասին, վորոնց նպատակն է վորակա-  
վոր բանվոր կառուցողներ պարաստել,  
այլ և ծանոթացնել կառուցող աշակեր-  
տության կուրսերի հետ: Առանձնապես  
կարևոր է ցույց տալ բանվորներին վորա-  
կալորումը բարձրացնելու այն ինքնու-  
րույն աշխատանքի ձևերը, վորպիսիք  
կազմակերպվում են անմիջականորեն արհ-  
կազմակերպության կողմից: Ղեկավարը  
պետք է բանվորների առաջ հրապարակ  
հանի արտադրական խմբակների և արտա-  
դրական լուսավորության զանազան մաս-  
սայական ձևերի գործնական նշանակու-  
թյունը վորակավորման համար: Նույն-  
պես անհրաժեշտ է ոգնել բանվորին ըմ-  
բռնելու, թե ինչպես կարող է նա արտա-

դրության մեջ բարձր վորակավորման  
հասնել՝ դառնալ տասնապետ, տեխնիկ,  
ճարտարագետ: Բանվորին անհրաժեշտ է  
բացատրել նույնպես, թե ինչ ոգնություն  
կարող է ցույց տալ իրեն արհեստակցական  
կազմակերպությունը, իր վորակավորու-  
մը բարձրացնելու գործում և այդ խընդ-  
րում ինչ են պարասվոր անելու տնտեսա-  
կան մարմինները:

ՉՐՈՒՅՑԻ ԾՐԱԳԻՐԸ

1. Ի՞նչ արհեստակցական-տեխնիկա-  
կան դպրոցներ կան, ուր հասակավոր և  
պատանի բանվորը կարող է վորակավո-  
րում ստանալ կամ բարձրացնել վորակա-  
վորումը:

2. Ի՞նչ կարեղ է տալ ակումբը և  
կարմիր անկյունը կառուցողին, իր վորա-  
կավորումը բարձրացնելու համար:

3. Ի՞նչ կարող է ստանալ կառուցող  
բանվորը արտադրական խմբակներից:

4. Ինչպե՞ս բարձրացնել վորակավո-  
րումը, արտադրական փորձառու թյան փո-  
խանակման ճանապարհով:

5. Ինչպե՞ս կարող է բանվորը հասնել  
վորակավորման բարձր աստիճաններին՝  
դառնալ տեխնիկ, ճարտարագետ:

ԶՐՈՒՅՑԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒ-  
ԹՅՈՒՆԸ

1. Ի՞նչ արհեստակցական-տեխնիկա-կան գպրոցներ կան, ուր հասակավոր և պատանի բանվորք կարող է վորակավորում ստանալ կամ բարձրացնել վորակավորումը:

Ներկայումս վորակավոր կառուցող բանվորներ պատրաստելու սխտեմատիկ աշխատանքին մեծ ուշադրություն են նվիրվում թե միության և թե պետության կողմից: 1928 թվականի սկզբին 28 կառուցման աշակերտության դպրոցներում սովորում էին 2.434 հոգի՝ յերիտասարդներ: Սակայն յերիտասարդությունը, գլխավորապես, սովորում է բրիգադային և անհատական աշակերտության կարգով: Վերջին սեզոնում բրիգադներն ընդգրկում էին վոչ պակաս քան 3.000 բանվոր պատանիներ: Անհատական աշակերտությունն ընդգրկում է մինչև 12.000 պատանիներ: Միլիկատային արգյունագործության գործարաններում կա 6 դպրոց, 373 սովորողներով: Չափազանց աննշան է կերամիկայի արտադրության ցանցը: Այդ ցանցը վոչ մի դեպքում չի կարող բավարարել արտադրության ունեցած վորակավոր

բանվորների հսկայական պահանջը: Իրանով և բացատրվում միության ԿԿ-ի և Աշխտողկոմատի ձեռք առած յեռանդուն միջոցները գործադուրկներին վորակավորելու: Ներկայումս գործադուրկների վերավորակավորման գործը լայն ծավալ և ընդունել, ընդգրկելով հազարավոր գործադուրկներ՝ մի շարք խոշոր ինդուստրիալ կենտրոններում: Գործադուրկներին սովորեցնելը կատարվում է ԱԿԻ-ի մշակած արագացրած մեթոդներով:

Չափազանց աննշան է հատակավոր բանվորների վորակավորումը բարձրացնելու կուրսերի ցանցը: Միության ԿԿ-ի ունեցած տվյալների համաձայն, ընդամենը գոյություն ունի 5 կուրս 698 ունկնդիրներով: Բայց շատ լայն ծավալում ունի ամսնապետների կուրսերը: Այդպիսի 26 կուրսեր կան 1.392 սովորողներով: Տեխնիկ-կառուցողներ պատրաստելու համար հիմնված է 18 տեխնիկում 3.392 ուսանողներով: Ճարտարագետ-կառուցողներ պատրաստվում են բարձրագույն տեխնիկական կրթական հաստատությունների հատուկ կառուցողական Փակուլտետներում: Կառուցողներ պատրաստող բոլոր այդ պրոֆտեխնիկական դպրոցների ցան-

ցը ներկայումս բացահայտ կեպո՞վ քիչ և բավարարելու կառուցողական արտագրութեանը և պետութեանը միջոցներ և ձեռք առնում նրանց թիվը ավելացնելու:

Կառուցողների կուրսերը պիտի պահպեն ի հաշիվ տնտեսական որպանների:

Վարչական ուժ պատրաստելու ծախքերը, համաձայն կառավարութեան վորոշման, կարող են կազմել կառուցողական աշխատանքների նախահաշիվների աշխատավարձի մինչև 1,5 տոկոս:

2. Ի՞նչ կարող է տալ ակումբը և կարմիր անկյունը կառուցողին, իր վորակավորումը բարձրացնելու համար:

Պրոֆեսսիոնալ-տեխնիկական դպրոցական հիմնարկների ցանցի անբավարար լինելու դեպքում, հսկայական նշանակութեան ունեն վորակավորման բարձրացման այն ձևերը, վորոնք առաջանում են բանվորների ինքնագործունեութեան հետևանքով: Բանվորական ակումբը և կարմիր անկյունը շատ բան կարող են անել բանվորների վորակավորումը բարձրացնելու և նրանց արտագրական գրագրութեանը զարգացնելու գործում: Արհեստակցական լուսավորութեան մասսայական աշխատանքը, գլխավորապես, ծա-

վալում է գրույցներին, դասախոսութեաններին, հարց ու պատասխանի յերեկոների, արտագրական եքսկուրսիաներին, ցուցահանդեսների ձևով և այլն: Իր արտագրողական աշխարհայացքը ընդարձակել ցանկացող բանվորը պետք է ոգտագործի յուրաքանչյուր հնարավորութեան, բարձրացնելու իր վորակավորումը: Նա պետք է ոգտակար տեղեկութեաններ քաղի տեխնիկական գրականութեանից, ժուրնալներից ու լրագրներից, ավելի փորձառու ընկերների հետ ունեցած գրույցներից, պատի լրագրներից, ուղիտ-հաղորդումներից և այլն: Բանվորների տեխնիկական ինքնագրագրման բավական արժեքավոր ձև հանդիսանում է շատ ակումբներում և գրագրաններին կից կազմակերպված տեխնիկական կոնսուլտացիան:

Արտագրական կոնկուրսները, ցուցադրական արտագրական գատերը, հատուկ արտագրական յերեկոները, արտագրական տոնակատարումները կառուցման հիմնարկման կամ շենքի ավարտման առթիվ և այլն, շատ ոգտակար բան կարող են տալ բանվորին, ավելի լավ բժուկնելու մեր սոցիալիստական շինարարութեան առանձնահատկութեանները:

3. Ի՞նչ կարող է ստանալ բանվոր կառուցողը արտադրական խմբակներից:

Արտադրական խմբակների թանգարտեք լինելու լավագույն ապացույց կարող է ծառայել այդ խմբակների արագ աճումը վերջին տարիներում: 1926 թվի սկզբում կառուցողներն ունեյին ընդամենը այդպիսի 50 խմբակներ, իսկ 1927 թվի սկզբին՝ արդեն 227: Կառուցողների մեջ տարված կուլտաշխատանքի պրակտիկան առաջ է քաշել կառուցողական արտագրուիթյան արտադրական խմբակների զանազան տեսակներ: Բանվորներին արտադրական խորհրդակցություններում, դասախոսությունների, զրույցների ընթացքում հետաքրքրող առանձին հարցերը վերլուծելու համար, բանվորների ցանկությամբ, կազմակերպվում են կարճատև «թույցիկ» խմբակներ, ընդամենը 2—3 պարապմունքով:

ՀԿԲԱՄ-ի ԿԿ-ի համամիութենական կուլխորհրդակցությունը, վորպես արտադրական խմբակների հիմնական ախպ, ճանաչել է ձեռնարկություններում, հանրակացարաններում կամ ակումբներում կազմակերպված խմբակները, վորոնք ընդգրկում են այս կամ այն արհեստի

աշխատանքի հիմունքների բոլոր գիտությունները՝ նկատի առնելով քիչ վորակավոր բանվորներին՝ 12—15 պարապմունքի ծրագրով: Վորակավոր բանվորների գիտությունները բարձրացնելու և այս կամ այն արհեստի ավելի դժվարին մոմենտների թեորեատիկ հիմնավորման համար կազմակերպվում են խմբակներ զանազան հարցերի մասին, 5—7 պարապմունքով: Կառուցման արվեստի հիմունքները ուսումնասիրելու համար կազմակերպվում են համարտադրական գիտությունների խմբակներ, աշխատանքի այնպիսի ծրագրով (20—24 պարապմունք), վորն ինկատի ունի ընդհանուր պատրաստականություն ունեցող վորակավոր բանվորներ: Արդարական խմբակները պետք է ոգնեն բանվորին ծանոթանալու աշխատանքի կանոններին և յեղանակներին, գործիքները նպատակահամար ոգտագործելու հարցերին, մեխանիզմներին և նյութերին: Ահհրաթեչտ է բանվորներին ծանոթացնել չափերի մետրական սիստեմին՝ համաձայն կառուցողական արտագրուիթյան: Հարկավոր է նույնպես սովորեցնել, վորպեսզի բանվորները կարողանան չափել կատարված աշխատանքները: Չափազանց կարևոր է ծանոթացնել աշխատանքի նորմի-

բովկայի պրակտիկային՝ կառուցողական արտադրութեան մեջ: Արտադրական խրմբակներին խիստ արժեքավոր ձևերից մեկը արտադրութեան բացիտնալիզացիայի խմբակներն են, վորոնք կազմակերպւում են արտադրական խորհրդակցութեաններին ակտիվի համար:

4. Ինչպե՞ս կարող ե բանվորը բարձրացնել իր վորակավորումը արտադրական փորձի փոխանակութեան միջոցով:

Արտադրութեան սքանչելի դպրոց հանդիսանում են արտադրական խորհրդակցութեանները, ուր և եյապես տեղի յե ունենում արտադրական փորձառութեան փոխանակութեանը:

Այլ կառուցողական ձեռնարկութեաններին և նույն ձեռնարկութեան մեջ աշխատող ընկերների արտադրական փորձառութեան հետ ծանոթանալու խիստ արժեքավոր ձև պետք է համարել արտադրական եքսկուրսիաները: Այցելելով ուրիշ կառուցողական ձեռնարկներ, բանվորը հնարավորութեան է ստանում համեմատելու գործի կազմակերպումն իր և ուրիշների մոտ: Առանձնապես հանձնարարւում է այցելել այնպիսի կառուցողական աշխատանքներ, ուր գործադրւում են մեքենա-

յացման նոր մեթոդներ և արտադրութեան բացիտնալիզացիա:

Արտադրական փորձառութեան փոխանակման համար մեծ նշանակութեան ունեն արտադրական ցուցահանդեսները և անկյունները: Վերջին ժամանակներս բանվորների հատուկ ուշադրութեան են դրւում արտադրական խորհրդակցութեաններին նվաճումների և բանվորական գյուտարարութեան ցուցահանդեսները, այսպէս կոչւած «բանվորի սրամտութեան» ցուցահանդեսները: Աշխատանքի տեսանելի մեթոդների միջոցով կարելի յե ցույց տալ բանվորին, ինչպէս պետք է ուղիղ աշխատել: Անվտանգութեան տեսիլիկայի պրակտիկաները պետք է լայն կերպով ոգտագործւեն, բանվորներին նախազգուշացնելու արտադրական վտանգներից: Մածկույթների, արմատներին և այլն մոդելները հանդիսանում են խիստ ոգտակար միջոց քիչ վորակավոր բանվորներին ծանոթացնելու շենքի սովորաբար դժվար հասկանալի, բարդ մասերի հետ:

Անհրաժեշտ է, վորպեսզի ԽՍՀՄ-ի յուրաքանչյուր բանվոր, սոցիալիստական շինարարութեան յուրաքանչյուր մասնակից ամեն միջոց ձեռք առնի, վոր-

պեսզի իր արտադրական փորձառութ-  
յունը դառնա ամբողջ կողկետիկի սե-  
փականություն:

5. Ի՞նչպէս կարող ե բանվորը հաս-  
նել վորակավորման բարձր աստիճանի.  
դառնալ տեխնիկ, փարտաբագետ:

Հոկտեմբերյան Հեղափոխությունը  
լայն հնարավորություն տվեց բանվոր-  
ներին բոլոր կրթական հաստատություն-  
ներն ընդունվելու: Ամենուրեք բանվոր-  
ներն ընդունվում են առաջին հերթին:  
Սակայն, տեխնիկումում կամ բարձրագ-  
ուսյն դպրոցում սովորելու համար ան-  
հրաժեշտ ե ընդհանուր բարձր պատրաստա-  
կանություն ունենալ: Բանվորներին բար-  
ձրագուսյն դպրոց ընդունվելու պատրաստ-  
ման աշխատանքը կատարվում ե գլխավոր-  
ապես բանվորական Փակուլտետներում,  
վորոնք լինում են յերեկոյան և ցերեկ-  
վա: Բանֆակներից անկախ, բանվորը կա-  
րող ե բարձրագուսյն դպրոց կամ տեխնի-  
կում ընդունվել անմիջականորեն, պատ-  
րաստվելով բարձրագուսյն դպրոցների  
համար պատրաստող ընդհանուր կրթա-  
կան կամ հատուկ կուրսերում: Կարելի յե  
պատրաստվել բարձրագուսյն դպրոց ըն-  
դունվելու նաև ինքնադարգացման միջո-


ցով: Սակայն բարձրագուսյն դպրոց ըն-  
դունվելու ամենավստահելի ճանապահր  
Բանֆակն ե: Վորովհետև բարձրագուսյն  
դպրոցներում և առավելապես բանֆակ-  
ներում տեղերի թիվը սահմանափակ ե,  
ուստի արհմիությունները Բանֆակ  
գործուղղելիս հարկադրված են ընտրելու  
ամենից ավելի ընդունակ, ավելի պատ-  
րաստված ընկերների, վորոնք ունեն վո-  
րոշ արտադրական ստաժ:

Փոյություն ունեն նաև հատուկ յե-  
րեկոյան բանվորական տեխնիկումներ,  
ուր բանվոր-կառուցողը կարող ե սովո-  
րել, առանց կարվելու արտադրությու-  
նից: Այն բանվորների համար, վորոնց  
հեղափոխությունն առաջ քաշեց սնտե-  
սական և վարչական պաշտոնների, գոյու-  
թյուն ունեն բանվորական վարչագետ-  
ների, կարմիր դիրեկտորների կուրսեր և  
հատուկ Արգյունագործական Ակադե-  
միա: Բացի դրանից, այն բանվորները,  
վորոնք մեծ փորձ են ձեռք բերում ար-  
տադրական աշխատանքում և տիրապե-  
տում են անհրաժեշտ թեորետիկ գիտու-  
թյունների, կարող են ճարտարագետի  
կամ տեխնիկի քննություն տալ, առանց  
վորեն կրթական հաստատության մեջ


սովորելու: Վերջերս զարգանում է վորահա-  
վորման մի նոր ձև, այսպես կոչված  
առկա (գառչնոյե) ուսուցում:

### ՄԵԹՈԴԱԿԱՆ ՅՈՒՅՄՈՒՆՔՆԵՐ

Այս գրույցում ղեկավարը պետք է  
առանձնապես մանրամասնորեն կանգ առ-  
նի բնվորներին ծանոթացնելու այն  
պրոֆտեսիսիկական կրթական հաստա-  
տությունների հետ, վորոնք անմիջա-  
կանորեն կապված են տվյալ արտադրու-  
թյան հետ կամ գտնվում են տվյալ շրջա-  
նում: Զրույցում ղեկավարը պետք է  
բանվորներին գործնական խորհուրդներ  
տա, ո՞ւր և ի՞նչպես կարող են նրանք  
սովորել: Վորպես գրույցի հետևանք, ղե-  
կավարը պետք է բանվորների հետ միա-  
սին ծրագրի, թե գործնականապես ինչ  
պետք է անել ոգնելու բանվորներին, նը-  
րանց վորակավորումը բարձրացնելու հա-  
մար: Այս գրույցի ամենից գնահատելի  
արդյունքը հանդիսանալու յե արտադրա-  
կան խմբակ կամ արտադրական ցուցա-  
հանգես, տեխնիկական դասախոսություն-  
ների ցիկլ կամ արտադրական լուսավո-  
րության այլ գործնական ձևանարկու-  
թյուն հիմնել:



ՀՀ Ազգային գրադարան



NL0196875

331.881(47):69

P-36